ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարարության մակրոտնտեսական քաղաքականության վարչության պետ Գարիկ Պետրոսյանի՝ 2023թ. սեպտեմբերի 28-ից 29-ը Ռուսաստանի Դաշնություն գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Գարիկ Պետրոսյան, ՀՀ ֆինանսների նախարարության մակրոտնտեսական քաղաքականության վարչության պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ք. Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2023 թվականի սեպտեմբերի 28-ից 29-ը

3. Հրավիրող կողմը՝

Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարություն

4. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն Մոսկովյան ֆինանսական ֆորումին և ֆորումի ընթացքում «ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության ժամանակակից համակարգը և գործիքները» թեմայով զեկույցի ներկայացում:

5. Քննարկված թեմաները՝

Ֆորումի ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները՝

- Նոր հավասարակշռության որոնման մեջ. Ռուսաստանի ֆինանսատնտեսական համակարգը գլոբալ վերափոխման ժամանակաշրջանում,
- Տարածաշրջանային ֆինանսների զարգացման հետագիծն արդի իրականությունում,
- Երկար փողեր. Խնայողություններ և ներդրումներ

- Մարզերի տնտեսական ներուժի մեծացումը. մոտեցումներ և գործիքներ,
- Ռուսաստանի Դաշնության բյուջետային օրենսգրքի 25 տարի. ռեսուրսի բաշխումից մինչև արդյունքների կառավարում,
- Բյուջետային համակարգի բյուջեների երկարաժամկետ հավասարակշռության և կայունության ժամանակակից պահանջները,
- Բյուջեի ծախսերի արդյունավետության և արդյունավետության բարձրացման գործիքների կիրառման առանձնահատկությունները,
- Պետական ֆինանսների կառավարման թվայնացման արդի միտումներն ու առանձնահատկությունները,

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Ֆորումի ընթացքում ներկայացվել է «ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության ժամանակակից համակարգը և գործիքները» թեմայով զեկույցը, որի նվիրված էր ՀՀ ֆինանսների նախարարությունում հարկաբյուջետային քաղաքականության վերլուծության և կանխատեսման համակարգի և գործիքների նկարագրությանը, ինչպես նաև ՀՀ կառավարության պարտքի կայունության և հարկաբյուջետային կանոնների վերաբերյալ ՀՀ ՖՆ կողմից իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքներին: Ելույթից հետո ծավալվել է քննարկում վերոնշյալ հարցերի վերաբերյալ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Միջոցառման ընթացքում երկկողմ հանդիպումներ են տեղի ունեցել Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Շիրոկովի, Ուզբեկստանի ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Խադարովի գլխավորած պատվիրակության, ինչպես նաև ՌԴ ֆինանսների նախարարության գիտահետազոտական ֆինանսական ինստիտուտի (НИФИ) գործընկերների հետ,

որոնց ընթացքում քննարկվել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առկա չեն

Ստորագրությունը, ամսաթիվը՝ Գարիկ Պետրոսյան

03 հոկտեմբերի 2023թ.